UDC 37.013.42
DOI 10.46991/educ-21st-century.v6.i1.134

ԵՐԵԽԱՅԻ ԱՆՁԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Մելքոնյան Շողիկ
Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան,
Հայաստանի Հանրապետություն
shoghik-melkonyan@mail.ru
https://orcid.org/0009-0008-0041-9262

Ամփոփում

Սոցիալականացումը՝ որպես մանկավարժական տարբեր գիտաճյուղերի հիմնախնդիր, արդիական է բոլոր ժամանակներում, քանի որ այն նպաստում է անձի սոցիալական հմտությունների զարգացմանը, հաղորդակցական իրավասության բարձրացմանն ու սոցիալական ինքնության ձևավորմանը: Հետազոտության արդիականությունն պայմանավորված է այն հիմնարար փոփոխություններով, որոնք տեղի են ունենում հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: 21-րդ դարում հասարակության զարգացմանը բնորոշ են ինտեգրման գործընթացներ բոլոր ոլորտներում, այդ թվում՝ կրթության: Համընդհանուր ներառականության պայմաններում երեխայի անձի սոցիալականացման գործընթացը նոր նշանակություն է ձեռքբերում: Այս համատեքստում նորովի մոտեցում է ենթադրում սոցիալականացման գործընթացի գործոնների դիտարկումը:

Ներկայացված հոդվածը այդ հիմնախնդրի ուսումնասիրության անքակտելի մասն է, որում ներակայացված են սոցիալականացման կենսաբանական գործոնների վերաբերյալ տարբեր հետազոտություններ, մոտեցումներ դրանց նշանակության մասին:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել և համադրել գիտական տարբեր մոտեցումները կենսաբանական գործոնների կարևորության վերաբերյալ երեխայի սոցիալականացման գործընթացում:

Հետազոտության նորույթը: Ուսումնասիրվել և վերլուծվել են հիմնախնդրի վերաբերյալ տարբեր տեսակետներ, և դրանք դիտարկվել են որպես հիմնավորումներ կենսաբանական գործոնների որոշիչ դերի վերաբերյալ երեխայի անձի սոցիալականացման գործընթացում:

Բանալի բառեր՝ *սոցիալականացում, կենսաբանական գործոններ, ժառանգականություն, գեներ, օժտվածություն, խառնվածք, ընդունակություններ, բնավորություն, կոնվերգենցիա:*

Հիմնախնդրին առնչվող ընթացիկ հետազոտությունների և հրապարակումների վերլուծություն:

Սոցիալականացումը, ինչպես հայտնի է, իրականացվում է տարբեր իրավիճակներում, որոնք առաջանում են մարդու վրա բազմաթիվ հանգամանքների ազդեցության արդյունքում, և որոնք պահանջում են որոշակի վարք ու գործողություններ: Նման հանգամանքները կոչվում են սոցիալականացման գործոններ (Մուդրիկ Ա. Վ., Գոլովանովա Ն. Ֆ. և այլք): Սակայն ոչ բոլոր գիտնականներն են ընդգծում կենսաբանական գործոնները: Միևնույն ժամանակ մյուսները (Հարությունյան Ն. Կ., Ղազարյան Ա. Պ., Ղուկասյան Լ. Գ., Կրիվշենկո, Լ. Պ., Մոխնաչ Ն. Ն. և այլք) շեշտում են կենսաբանական գործոնների որոշիչ դերը սոցիալականացման մեջ: Այսպես, օրինակ, նրանք մարդկային ցեղի շարունակության հիմք են համարում ժառանգականությունը. ժառանգականությամբ են որոշվում նաև մարդու որոշ հիվանդություններ, որոնք, մեր կարծիքով, տարբեր կերպ են ազդում երեխայի սոցիալականացման վրա:

Հետազոտությունները (Ա. Թոմաս, Ս. Չեզ և այլն) բացահայտել են խառնվածքի կենսաբանական բնույթը և նրա կապը մարդու հուզականության ու ակտիվության հետ:

Եվ այս տեսանկյունից կարող ենք ասել, որ խառնվածքը ոչ միայն նպաստում է վարքի որոշ տեսակների ձևավորմանը, այլև ազդում է սոցիալականացման աստիճանի և որակի վրա: Կենսաբանական կոնվերգենցիայի տեսությունը (Վ. Շտեռն, Է. Կոնկլին) ճանաչում է երկու գործոնի դերը՝ կենսաբանական ու սոցիալական: Այնուամենայնիվ, չնայած այս խնդրի վերաբերյալ բազմաթիվ ուսումնասիրություններին՝ հասարակության և կրթության զարգացման նոր՝ համընդհանուր ինտեգրման պայմաններում երեխայի սոցիալականացման վրա կենսաբանական գործոնների դերի և ազդեցության մասին հարցերը մնում են ոչ բավարար ուսումնասիրված:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել և համադրել տարբեր գիտական մոտեցումները կենսաբանական գործոնների կարևորության վերաբերյալ երեխայի սոցիալականացման գործընթացում:

Հետազոտության նորույթը: Ուսումնասիրվել և վերլուծվել են հիմնախնդրի վերաբերյալ տարբեր տեսակետներ, և դրանք դիտարկվել են որպես հիմնավորումներ կենսաբանական գործոնների որոշիչ դերի վերաբերյալ երեխայի անձի սոցիալականացման գործընթացում:

Հետազոտության մեթոդներն են՝ մասնագիտական գրականության ուսումնասիրություն և վերլուծություն, տրամաբանական ամփոփում, տեսական հիմնավորում:

Հիմնական նյութի շարադրանքը: Մարդու սոցիալականացման գործընթացում որոշիչ դեր է տրվում կենսաբանական գործոնին: Այս համատեքստում կարևորվում են կենսաբանական գործոնների դասակարգման վերաբերյալ տարբեր հետազոտությունները (Է. Էրիկսոն, Ջ. Բոուլբի, Դ. Գոլեման, Մ. Պոսներ, Բ. Լիպտոն և մյուսները): Ուսումնասիրելով այդ հետազոտությունները՝ մենք առանձնացրել ենք կենսաբանական գործոնների հետևյալ տեսակները՝ գենետիկական (ժառանգական գործոններ, գեներ, որոշ ժառանգական նախադրյալներ, հակվածություններ որոշակի հիվանդություններին և այլն), նեյրոկենսաբանական (կապված ճանաչողական և այլ ընդունակությունների հետ, հիշողություն և այլն), ֆիզիոլոգիական (կապված ֆիզիկական առողջության հետ և այլն), հուզական և հոգեբանական (խառնվածք, հույզերի կառավարում և այլն): Նշված բոլոր գործոններն ազդում են մարդու վարքագծի, հասարակական կյանքում մասնակցության վրա, մի խոսքով սոցիալականացման գործընթացի արդյունավետության վրա:

Կենսաբանական գործոններից է ժառանգականությունը: Ժառանգականությունը «օրգանիզմների՝ իրենց հատկանիշները, հատկությունները պահպանելու և զարգացման առանձնահատկությունները հաջորդ սերունդներին փոխանցելու երևույթն է» [1, էջ 19]:

Ժառանգականության խնդրի վերաբերյալ գիտական գրականության (Կոտովա Ի. Վ., Դուբինին Ն. Պ., Հարությունյան Ն. Կ. և այլն) ուսումնասիրությունը մեզ թույլ տվեց նշել, որ ծնողներից երեխաներին ժառանգաբար փոխանցվում են.

- տեսակային հատկանիշները, որոնք բնութագրում են անհատին՝ որպես մարդկային ցեղի ներկայացուցչի (ուղիղ քայլք, մտածողություն, խոսք և այլն)՝ անկախ ռասայից, ազգային պատկանելությունից,
- արտաքին հատկանիշները (մարմնի կառուցվածք, մաշկի, մազերի, աչքերի գույն, ռասայական հատկանիշներ),
- ֆիզիոլոգիական հատկանիշները (արյան խումբ, ճնշում, նյութափոխանակություն և այլն),

- նյարդային համակարգի հատկանիշները (գլխուղեղի կեղևի կառուցվածքը, բարձրագույն նյարդային գործունեության տեսակը),
- օրգանիզմի զարգացման անոմալիան (դալտոնիզմ, «նապաստակի շրթունք» և այլն):

Ժառանգականությամբ են պայմանավորված նաև որոշ հիվանդություններ:

Հատուկ գրականության ուսումնասիրությունների ու վերլուծությունների (Ավիլովա Տ. Մ., Պանախին Վ. Մ., Բոչկով Ն.Պ., Աղաջանյան Ա. Վ., Տկաչուկ Ե. Ա. և այլք) արդյունքում ընդհանրացրել ենք «ժառանգական հիվանդություններ» հասկացության մասին պատկերացումները. սրանք գենային կամ քրոմոսոմային մուտացիաների հետևանքով առաջացած հիվանդություններ են, երբ փոխվում է մեկ կամ մի քանի գեն: Իսկ եթե այս գենետիկ փոփոխությունը փոխանցվում է ծնողներից երեխաներին, ապա առաջանում են ժառանգական գենետիկ հիվանդություններ:

Հիվանդությունները բաժանվում են խմբերի՝ կախված ժառանգականության դերի և էկզոգեն գործոնների հարաբերակցությունից.

I խումբ – փաստացի ժառանգական հիվանդություններ, ժառանգական անմիջական ազդեցությամբ:

Այս հիվանդությունների հիմնական պատճառը թուլացած գեներն են, պաթոլոգիական մուտացիաները, որոնք գրեթե կախված չեն շրջակա միջավայրից: Դրանց թվին են դասվում՝ հեմոֆիլիան, Դաունի հիվանդությունը, Անգելմանի համախտանիշը, աուտիստիկ սպեկտրի խանգարումը և այլն:

II խումբ – բազմագործոն բնույթի հիվանդություններ, որոնց հիմքում ընկած է գենետիկական և շրջակա միջավայրի գործոնների փոխազդեցությունը:

Այս հիվանդությունները կապված են սխալ կենսակերպի, վատ սովորությունների հետ՝ հիպերտոնիա, շաքարախտ, խոցային հիվանդություն և այլն:

III խումբ – հիվանդություններ, որոնք պայմանավորված են շրջակա միջավայրի անբարենպաստ գործոնների ազդեցությամբ: Ժառանգականությունն այստեղ գրեթե դեր չի խաղում: Այն կարող է ազդել միայն հիվանդության ընթացքի և տեմպի վրա: Դրանք վնասվածքներն են, այրվածքները և այլն [9]:

II-III խմբերի հիվանդությունները կապված են շրջակա միջավայրի և կենսակերպի հետ: Անկասկած, ժառանգականությունը մեծ դեր է խաղում մարդու առողջության ապահովման գործում, սակայն ճնշող դեպքերում շրջակա միջավայրն ու կենսակերպը բարելավում են առողջության և կյանքի որակը:

Մարդու ժառանգական հիվանդությունները տարբեր աստիճանի (շատ ուժեղ, թեթև և այլն) կարող են կամ չեն կարող ազդել մարդու սոցիալականացման գործընթացի վրա: Օրինակ՝ «նապաստակի շրթունք» ունեցող անձը դժվարանում է շփվել շրջապատի հետ և զբաղվել որոշակի տեսակի գործունեությամբ: Դա նրան առանձնակի դիրքում է դնում մյուսների համեմատ, միանշանակ խանգարում է կյանքի որոշակի իրավիճակներում, ազդում սովորությունների, վարքագծի ձևերի և այլնի վրա: Կամ դիտարկենք «աուտիստիկ սպեկտրի» հիվանդությունները, որոնք ուղեկցվում են հաղորդակցության, ըմբռնման և երևակայության խանգարումներով:

Այստեղ ակնհայտորեն խաթարված է սոցիալական փոխազդեցությունը, որն ազդում է սոցիալականացման գործընթացի վրա: Կասկածից վեր է, որ այս հիվանդությունների մասին գիտելիքները կօգնեն մանկավարժներին նման երեխաներին հասարակության մեջ ինտեգրվելու հարցերում:

Հայտնի հոգեբան Ա. Գ. Մակլակովը ներկայացնում է մարդու ընդունակությունները որպես անհատական և սոցիալական հատկությունների ամբողջություն, որոնք դրսևորվում են հոգեֆիզիոլոգիական ու անձնական մի շարք գործառույթներով: Հետազոտողը նշում է, որ ընդունակությունները բնածին են, ժառանգական, բայց դրանք դրսևորվում և զարգանում են սոցիալական պայմաններում[4]: Նա այս եզրակացությանն է հանգել՝ կիրառելով ֆունկցիոնալ-գործունեության մոտեցումը ընդունակությունների բնույթի վերաբերյալ:

Մեր հետազոտության համար հետաքրքրություն է ներկայացնում նաև ընդունակությունները դիտարկել ֆունկցիոնալ-գենետիկական մոտեցմամբ, ընդունակությունների կառուցվածքի գործառույթների և ֆունկցիոնալ համակարգերի դիրքից, ընդունակությունների առաջացումը գենետիկայի տեսանկյունից: Որոշ հոգեբաններ (Վ. Դ. Շադրիկով և մյուսներ) կարծում են, որ երեխան ծնվում է գենոտիպային որոշակի ընդունակություններով, գլխավորը մարդու հոգևոր ընդունակություններն են, որոնք դրսևորվում են բարոյական վարքագծով, հոգևոր արժեքների ազդեցության ներքո և այլն:

Ըստ Ե. Պ. Իլյինի՝ ընդունակությունների բնածին լինելու հարցը մնում է բաց: Հեղինակը կարծում է, որ եթե ընդունակություններ ասելով նկատի ունենք այս կամ այն որոշակի կողմերի դրսևորման մակարդակը, գործառույթների հատկությունները, որոնք պայմանավորված են միայն բնածին հակումներով, սա մի բան է, իսկ եթե ընդունակություններ ասելով նկատի ունենք մարդու ցանկացած հնարավորություններ կամ հնարավորությունների ինտեգրալ բնութագիր, սա բոլորովին այլ է [3]:

Ե. Պ. Իլյինի տեսակետների վերլուծությունը ցույց է տվել, որ նա չի ժխտում, որ մարդը ծնվում է տարրական հոգեկան և հոգեշարժողական գործառույթներով: Եթե հաշվի առնենք, որ տարբեր բնութագրերի դրսևորման մակարդակը որոշող հակումները, այդ գործառույթների հատկությունները բնածին են, ապա, հեղինակի կարծիքով, պետք է ընդունել, որ ընդունակությունները (նեղ, այլ ոչ թե ընդհանուր հոգեբանական մեկնաբանությամբ) բնածին են [3]:

Ընդունակությունները կենսաբանորեն որոշված են, բայց դրանք դրսևորվում, զարգանում են շրջակա միջավայրում, գործունեության մեջ և այլն: Դրանք կարող են փոխվել՝ կախված հանգամանքներից, անձի կենսագործունեությունից: Ուստի դրանք կարող են ազդել անձի սոցիալականացման աստիճանի, ինչպես նաև մասնագիտության ընտրության վրա: Եվ այս տեսանկյունից մեզ հետաքրքրեց Վ. Վ. Վիբորնովայի, Ե. Ա. Դունաևայի ուսումնասիրությունը, որում հիմնավորվում է, որ կապ կա մասնագիտության ընտրության ու գենետիկայի միջև, և մասնագիտական ընտրությունն իրականացվում է ժառանգական նախատրամադրվածության շնորհիվ: Ըստ այս գիտնականների տվյալների՝ ինտելեկտուալ ընդունակությունները 50-70%-ով որոշվում են գենետիկ նախատրամադրվածությամբ, իսկ մասնագիտության ընտրությունը՝ 40 %-ով [2]:

Սակայն, ինչպես գիտենք, ցանկացած մասնագիտական գործունեության արդյունավետությունը որոշվում է գիտելիքներով, հմտություններով, փորձով, միջավայրի ազդեցությամբ և այլն:

Վերոնշյալը թույլ է տալիս եզրակացնել, որ մարդու ընդունակությունները կարող են ազդել նրա սոցիալականացման աստիճանի ու արդյունքների վրա, և ընդունակությունները, նույնիսկ եթե լավ հակումներ ունեն, չեն կարող զարգանալ շրջապատից, գործունեությունից դուրս:

Ս. Լ. Ռուբինշտեյնի հետազոտության վերլուծությունը ցույց է տվել, որ գոյություն ունեն ընդունակությունների տարբեր մակարդակներ, և նրանց որակական հատկանիշը օժտվածությունն է: Իսկ օժտվածության հատկապես բարձր մակարդակը նշվում է «տաղանդ» և «հանճար» եզրույթներով: Նա նշանակալի ընդունակությունների ցուցիչներ է համարել տեմպը, յուրացման դյուրինությունը, առաջընթացի արագությունը: Առանձնացրել է օժտվածության երկու տեսակ՝ ընդհանուր օժտվածություն՝ ընդհանուր ընդունակությունների մակարդակ, և հատուկ օժտվածություն՝ հատուկ ընդունակությունների մակարդակ: Առաջին խմբում ներառել է ընդհանուր, հանրակրթական ուսուցման ընդունակությունները, իսկ երկրորդ խմբում՝ տեխնիկական, երաժշտական և այլ ընդունակությունները [7]:

Ըստ Ա. Գ. Մակլակովի սահմանման՝ դա ընդունակությունների յուրահատուկ համադրություն է, որը մարդուն հնարավորություն է տալիս հաջողությամբ կատարելու որևէ մեկ գործունեություն [4]:

Գիտական գրականության ուսումնասիրությունը (Բլինովա Վ. Լ., Շադրիկով Վ. Դ., Վիբոռնովա Վ. Վ.) թույլ տվեց մեզ ներկայացնել օժտվածության կառուցվածքային բաղադրիչները.

- անատոմիաֆիզիոլոգիական հակումներ,
- մտավոր-մտածական ընդունակություններ,
- հուզակամային կառուցվածքներ,
- ճանաչողական մոտիվացիայի գերիշխող դերը և այլն:

Օժտվածությունը, իհարկե, շատ հաճախ խանգարում է երեխայի սոցիալականացմանը. գաղտնիք չէ, որ օժտված երեխաները բարդ փոխհարաբերություններ ունեն հասակակիցների հետ, հաղորդակցության, փոխազդեցության մեջ և այլն: Իսկ այստեղ անհրաժեշտ է ծնողների, ուսուցիչների օգնությունը, որպեսզի օգնեն երեխային ձեռք բերել նորմալ ինքնաընկալում, ստեղծել վարքի համարժեք մոդել, լավ փոխհարաբերություններ հաստատել հասակակիցների հետ և այլն:

Սոցիալականացման կենսաբանական գործոնները ներառում են նաև խառնվածքը [1]: Խառնվածքը որպես կենսաբանական գործոն դիտարկելը մեզ համար կարևոր է, քանի որ այն ազդում է անձի վարքագծի առանձնահատկությունների, սոցիալական և բնական պայմաններին մարդու հարմարվողականության վրա և այլն:

Հոգեգենետիկ գրականության մեջ խառնվածքն ունի տարբեր սահմանումներ: Այսպես, օրինակ, Բ. Մ. Տեպլովը կարծում է, որ սա հատկությունների ամբողջություն է, որը բնութագրում է հոգեկան գործընթացների ընթացքի և մարդու վարքագծի դինամիկ առանձնահատկությունները, դրանց ուժը, արագությունը, առաջացումը, փոփոխությունը, դադարեցումը և այլն [8]:

Ի. Պ. Պավլովը խառնվածքի հիմքում տեսնում է բարձրագույն նյարդային գործունեությունը, իսկ խառնվածքն անվանում է նյարդային համակարգի տեսակ: Նա նյարդային համակարգին բնորոշ է համարել այնպիսի հատկություններ, ինչպիսիք են ուժը, հավասարակշռությունը, շարժունակությունը: Ըստ Պավլովի՝ այս հատկությունների համակցությունից են կախված բարձրագույն նյարդային գործունեության առանձնահատկությունները և, ինչը մեզ համար կարևոր է, շրջակա միջավայրի հետ օրգանիզմի փոխազդեցության բնույթը:

Ըստ Ի. Պ. Պավլովի՝ ԲՆԳ (բարձրագույն նյարդային գործունեության) հիմնական խնդիրն է ապահովել մարդու վարքագծի տարբեր ձևերը շրջակա միջավայրի փոփո-

խությունների պայմաններում [5]։ Դրանում տեսնում ենք խառնվածքի ազդեցությունը մարդու սոցիալականացման վրա։

Ընդհանրացնելով խառնվածքի սահմանումները հոգեբանության մեջ (Մակլակով Ա. Գ., Նեմով Ռ. Ս., Ռուբինշտեյն Ս. Լ. և այլք)՝ կարող ենք ասել, որ խառնվածքը հիմնականում ներկայացված է որպես անձի անհատական հոգեկան առանձնահատկություն, որը դրսևորվում է վարքի, ակտիվության, հույզերի և այլնի մեջ։ Եվ խառնվածք ասելով հասկանում ենք անձի մտավոր գործունեության դինամիկ բնութագրերը։

Վ. Վ. Իզմայիլովը, հղում անելով Ա. Թոմասի և Ս. Չեսի ղեկավարությամբ անցկացված խառնվածքի ուսումնասիրության արդյունքներին, նշում է այն փաստը, որ ունենալով կենսաբանական բնույթ՝ խառնվածքը կապված է նաև մարդու ակտիվության, հուզականությանն ու մարդամոտությանը։

Խառնվածքը, ըստ Վ. Վ. Իզմայիլովի, համեմատաբար կայուն է, դրսևորվում է վաղ մանկության տարիներին և մեծապես կախված է գենոտիպից։ Ա. Թոմասի և Ս. Չեսի ուսումնասիրությունների արդյունքները վկայում են խառնվածքի փոփոխականության վրա գեների ոչ հավելումային ազդեցության վարկածի օգտին [6]։

Ինչպես տեսնում ենք, Հիպոկրատի ժամանակներից այն ուսումնասիրողները, որոնք առանձնացրել են խառնվածքի հայտնի 4 տեսակները, խառնվածքը վերագրել են կենսաբանական գործոններին։

Հոգեգենետիկ ուսումնասիրությունները վկայում են բնավորության գծերի ձևավորման, անձի անհատական տարբերությունների վրա գենոտիպի ազդեցության մասին։ Խառնվածքն ու բնավորությունը կազմում են անհատի համակարգը, որոշում ընդհանուր պատկերը։ Խառնվածքը կարող է օգնել կամ խոչընդոտել մարդու բնավորության գծերի դրսևորմանը։ Օրինակ՝ խոլերիկ մարդու համար դժվար է զուսպ լինել, ֆլեգմատիկի համար՝ վճռական և այլն։

Ըստ Վ. Վ. Իզմայիլովի՝ բնավորության գծերը որոշվում են ինչպես գենոտիպով, այնպես էլ շրջակա միջավայրի ազդեցությամբ [6]։

Իսկապես, երկու գործոնների անբարենպաստ համադրությամբ կարող են լինել բնավորության շեղումներ, նույնիսկ պաթոլոգիա։ Իսկ եթե առկա է գործոնների բարենպաստ համադրություն (անգամ եթե կա անատոմիայի գենետիկ նախատրամադրվածություն), ապա բնավորության մեջ պաթոլոգիական շեղումներ չեն լինի։ Որոշ դեպքերում բնավորության ձևավորման գործում մեծ ներդրում ունի գենետիկական գործոնը, որոշներում՝ շրջակա միջավայրը։

Բայց մի բան անվիճելի է, որ անհատական առանձնահատկությունները, ըստ Վ. Վ. Իզմայիլովի, բարդ հատկանիշներ են միջանձնային փոփոխականության որոշման մեջ, որին մասնակցում են բազմաթիվ գործոններ, այդ թվում՝ ժառանգականությունը [6]։

Կատարված վերլուծությունները թույլ տվեցին եզրակացնել, որ բնավորությունը ձևավորվում է անձնային, անհատական առանձնահատկությունների հիման վրա, իսկ բնավորությունը որոշում է խառնվածքի բովանդակային կողմը. այն ունի բնածին և ձեռքբերովի որակներ։

Սոցիալականացման կենսաբանական գործոնների խնդրի վերաբերյալ մեր ուսումնասիրություններում մենք տեսանք տարբեր տեսակետներ, կարծիքներ, օրինակ Ա. Լ. Գեսելը փաստում է որ սոցիալականացման մեջ ամենակարևորը կենսաբանական գործոններն են։ Ամերիկացի հոգեբանը մարդու հասունացման մեջ հիմնականը համա-

րում էր կենսաբանական գործոնները, իսկ զարգացումը՝ դիտարկում որպես շրջակա միջավայրին հարմարվելու ձև [10]։

Ավստրիացի ականավոր հոգեբան Կ. Լ. Բյուլերը նույնպես կենսաբանական գործոնների առաջնահերթության կողմնակիցն էր։ Նա որպես վերելք ցույց տվեց մարդկային զարգացման ողջ ուղին՝ կապիկից մինչև հասուն կուլտուրական մարդ մեկ կենսաբանական սանդուղքով։ Նա պնդում էր մարդու զարգացման կենսաբանական պայմանականությունը, նրա ընդունակությունների ժառանգական բնույթը։ Բայց ընդգծում էր, որ առանց վարժությունների, մարդու բնական հակումները լիովին չեն բացահայտվի [10]։

Հումանիստական մանկավարժության և հոգեբանության ներկայացուցիչները (Մ. Մոնտեսորի, Կ. Լորենց, Է. Ֆրոմ և այլք) կարծում էին, որ նույնիսկ մարդու բարոյական որակներն են կենսաբանորեն որոշված։ Բայց, ինչպես հայտնի է, ոչ թե որակներն են ժառանգաբար փոխանցվում, այլ հակումները, որոնք կարող են և չդրսևորվել միջավայրի անբարենպաստ պայմաններում [10]։

Գիտնականների թվում կային նաև այնպիսիք (Հելվեցիուս Կ.Ա., Դիդրո Դ.Դ., Օուեն Ռ. և այլք), որոնք գերագնահատում էին սոցիալական միջավայրի դերը։ Բայց մարդը պասիվ օբյեկտ չէ, որին ուղղված է փոխազդեցությունը, միջավայրի ազդեցությունը։ Նա սուբյեկտ է, ստեղծագործող, արարիչ, և ինքն էլ կարող է փոխել միջավայրն ու ինքն իրեն [10]։

Հետաքրքիր է, որ էթնոմանկավարժության և բանահյուսության մեջ նույնպես անդրադարձել են մարդու որակների վրա միջավայրի և ժառանգականության ազդեցության խնդրին. «Լավ մարդու որդին փուչ չի դուրս գա» (հայ.), «Խնձորը ծառից հեռու չի ընկնում» (ռուս.), «Վատ սերմից մի՛ սպասիր լավ ցեղատեսակ (ռուս.), «երեխան կավ է, մայրը՝ բրուտ» (ուզբեկ.), «Դաստիարակությունը ժառանգականությունից ուժեղ է» (իտալ.), «Երեխան խմորի պես է. ինչպես հունցես, այնպես էլ կմեծանա» (ռուս.), «Նույն ջեռոցից, բայց տարբեր թափթափաներ» (ռուս.), «Մորը տես, աղջկան ուզիր», «Ծնող դառնաս, ծնողի դադրը կիմանաս» և այլն։

Որոշ գիտնականներ, օրինակ՝ Վ. Լ. Շտերնը, նշում են երկու գործոնի դերը՝ կենսաբանական ու սոցիալական։ Վերջինս կարծում էր, որ ծննդյան պահին երեխայի հնարավորությունները բավականաչափ սահմանված չեն, և միայն շրջապատն է օգնում երեխային գտնել ինքն իրեն, կազմակերպում է նրա ներաշխարհը։ Եվ երեխան շրջապատից վերցնում է այն ամենը, ինչ համապատասխանում է իր հակումներին։

Այս տեսությունը ստացել է երկու գործոնների «կոնվերգենցիայի (փոխազդեցության) տեսություն» անվանումը, քանի որ նրանում հաշվի է առնվել ժառանգականության և միջավայրի դերը։ Այս տեսության էությունն այն է, որ երեխայի մտավոր զարգացումը դիտարկվում է որպես ժառանգականության և շրջապատի ազդեցության տակ ձևավորվող գործընթաց։ Կոնվերգենցիայի տեսության հիմնական խնդիրն է հաստատել, թե ինչպես են առաջանում վարքի ձեռքբերովի ձևերը, և ինչ ազդեցություն ունեն ժառանգականությունը և շրջակա միջավայրը դրանց վրա։

Իր տեսության մեջ Վ. Լ. Շտերնը հաշվի է առել այն ժամանակվա երկու հայեցակարգ՝ էմպիրիզմ (մարդը դատարկ տախտակ է) և նատիվիզմ (գոյություն ունեն բնածին գաղափարներ)՝ կարծելով, որ ճշմարտությունը այս հակադիր տեսակետների համակցման մեջ է։ Որպես օրինակ նա բերում էր. շրջապատող աշխարհը երեխային նյութ է տրամադրում խաղի համար, և թե ինչպես և երբ նա կխաղա, կախված է խաղային բնազդի բնածին բաղադրիչներից [10]։

Հետագայում կենսաբանական կոնվերգենցիայի տեսությունը մշակվել է բազմաթիվ գիտնականների, օրինակ՝ Է. Կոնկլինի կողմից: Վերջինս պնդում էր, որ կենսաբանական ու սոցիալական գործոնները և շրջապատը համարժեք են: Ըստ նրա՝ «մարդը ստանում է կենսաբանական և սոցիալական ժառանգություն, որոնք գտնվում են բարդ հարաբերակցության մեջ, փոխադարձորեն պայմանավորում են միմյանց լինելիությունը» [1, էջ 91]:

Եզրակացություններ: Ներկայացված հիմնախնդրի վերաբերյալ մեր ուսումնասիրություններն ու վերլուծությունները, որոնք թույլ տվեցին հաստատել կենսաբանական գործոնների որոշիչ դերը երեխայի անձի սոցիալականացման գործընթացում: Սակայն այդ գործընթացում կարևոր նշանակություն ունեն նաև սոցիալական գործոնները:

Կենսաբանական գործոնների մասին գիտելիքները կօգնեն խուսափել երեխայի սոցիալականացման դժվարություններից, լիարժեք օգտագործել անձի հնարավորությունները շրջական միջավայրի հետ փոխազդեցության, հասարակության մեջ ինտեգրվելու համար:

Հետագա հետազոտությունների հեռանկարները: Երեխայի անձի արդյունավետ սոցիալականացման համար անհրաժեշտ է նաև ուսումնասիրել սոցիալական գործոնների դերը արդի ժամանակաշրջանում:

ANALYSIS OF THE IMPORTANCE OF BIOLOGICAL FACTORS IN THE SOCIALIZATION OF A CHILD'S PERSONALITY

Melkonyan Shoghik
Shirak State University after M. Nalbandyan,
Republic of Armenia
shoghik-melkonyan@mail.ru

Abstract

Socialization, as a problem of various pedagogical disciplines, is relevant at all times, since it contributes to the development of personal social skills, increases communicative competence and the formation of social identity. The relevance of the research is due to the fundamental changes taking place in various spheres of public life. In the 21st century, the development of society is characterized by integration processes in all spheres, including education. In conditions of universal inclusivity, the process of socialization of the child's personality acquires a new meaning. In this context, the new approach involves considering the factors of the socialization process.

The presented article is an integral part of the study of this problem, which presents various studies of biological factors of socialization and approaches to their significance.

The purpose of this research is to study and compare different approaches to the importance of biological factors in the process of child socialization.

The novelty of the study is that various points of view on the problem were studied and analyzed, and they were considered as a justification for the determining role of biological factors in the process of socialization of a child's personality.

***Keywords**: socialization, biological factors, heredity, genes, giftedness, temperament, abilities, character, convergence.*

АНАЛИЗ ВОПРОСА О ЗНАЧЕНИИ БИОЛОГИЧЕСКИХ ФАКТОРОВ В СОЦИАЛИЗАЦИИ ЛИЧНОСТИ РЕБЕНКА

Мелконян Шогик
Ширакский государственный университет им. М. Налбандяна,
Республика Армения
shoghik-melkonyan@mail.ru

Аннотация

Социализация, как проблема различных педагогических отраслей, актуальна во все времена, потому что она способствует развитию социальных навыков личности, повышению коммуникативной компетентности и формированию общественной идентичности. Её актуальность обусловлена измене-

ниями во всех сферах общественной жизни. В XXI в. общественному развитию присуща интеграция во всех областях, в том числе – в образовании. В условиях интеграции образования социализация личности ребенка приобретает новое значение. В таком контексте предполагается новый подход к рассмотрению факторов социализации.

Целью данного исследования является изучение и выявление соотношения различных подходов к определению важности биологических факторов в процессе социализации.

Научная новизна – изучены и проанализированы различные подходы к данной проблеме, которые послужили основой для утверждения определяющей роли биологических факторов в социализации личности ребенка.

Ключевые слова: *социализация, биологические факторы, наследственность, гены, темперамент, способность, характер, конвергенция.*

Օգտագործված գրականության ցանկ

1. Հարությունյան Ն. Կ., Ղազարյան Ա. Փ., Ղուկասյան Լ. Հ., Սոցիալական մանկավարժություն (բուհական ձեռնարկ) /Հարությունյան Ն. Կ., Ղազարյան Ա. Փ., Ղուկասյան Լ. Հ., Երևան, ԵՊՀ հրատ., 2017, 336 էջ:
2. Выборнова В.В., Дунаева Е.М., Актуализация проблем профессионального самоопределения молодежи. // Социологические исследования. 2006, N 4, с. 99-105.
3. Ильин Е.П., Психология творчества, креативности, одаренности// Е.П. Ильин. Санкт-Петербург: Питер, 2009, 448 с.
4. Маклаков А.Г., Общая психология, СПб.: Питер, 2024, 582 с.
5. Павлов И.П., Общие типы высшей нервной деятельности животных и человека. / И.П. Павлов. – Москва. Директ Медиа, 2008, 50 с.
6. Психогенетика. Учебно-методический комплекс. Автор-составитель: Измайлов В.В. Минск, Издательство МИУ 2010, 292 с.
7. Рубинштейн С.Л., Основы общей психологии: Учебное пособие / С.Л. Рубинштейн - Санкт-Петербург: Питер, 2018, 713 с.
8. Теплов Б.М., Психология и психофизиология индивидуальных различий: избранные психологические труды. / Б.М. Теплов – Москва: Издательство московского психолого-социального института. НПО МОДЭК 2009, 638 с.
9. Ткачук Е.А., Семинский И.Ж., Классификация наследственных заболеваний: https://doi.org/10.57256/2949-0715-2023-2-77-86.
10. Ярошевский М.Г., История психологии от античности до середины XX века.: Учебное пособие для высших учебных заведений. – 2-е изд. – М.: издательский центр «Академия», 1997, 416 с.

Получено: 15.04.2024 *Received: 15.04.2024*
Рассмотрено: 26.04.2024 *Reviewed: 26.04.2024*
Принято: 05.05.2024 *Accepted: 05.05.2024*

© The Author(s) 2024

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Comercial 4.0 International License